

Сергей Саядов, Становление арменоведения в России в первой трети XX века: вопросы историографии и источниковедения. Ростов-на-Дону, 2018, 483 с.

Հենց սկզբից պետք է արձանագրել, որ Ս. Սայադովի սույն մենագրությունը երկար տարիների գիտահետազոտական քրտնաջան աշխատանքի արդյունք է հայագիտության կայացման ռուսական դպրոցի ուսումնասիրության առումով: Շարունակելով ռուսական և հայկական պատմագրության լավագույն ավանդույթները՝ հեղինակը առաջին անգամ նորովի վեր է հանել ու շարդրել հայոց նոր պատմության ձևավորման օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնները՝ կապված Արևելյան Հայաստանի Ռուսաստանի միացման, ինչպես նաև Մոսկվայի Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտի գործունեության և Ս. Ի. Գլինկայի պատմական ժառանգության ուսումնասիրության հետ: Առաջին անգամ հայ պատմագրության մեջ, գիտական շրջանառության մեջ են դրվել բազմաթիվ արխիվային նորահայտ վավերագրեր սույն մենագրությունում մեծ ճշգրտությամբ, պարզ ու որակյալ ներկայացվել է հայագիտության կայացումը Ռուսաստանում: Օգտագործելով աղբյուրագիտական լայն բազան, փաստաթղթային նյութեր, պաշտոնական զեկուցագրեր, էլույթներ, պարբերական մամուլը, պաշտոնական անձերի հիշողությունները, տարբեր արխիվներից ու ժողովածուներից քաղված նյութեր, հեղինակին հաջողվել է ստեղծել կուռ տրամադրված և ամբողջական գիտահետազոտական բնույթի ծանրակշիռ աշխատանք:

Ներածությունում տրված է պատմագրության զարգացման ամբողջական գնահատականը, ներկայացված են հետազոտության օբյեկտը, նպատակն ու խնդիրները, ռուսական արևելագիտության զարգացումը, Ռուսաստանում հայագիտության կայացման օբյեկտիվ նախադրյալները, Լազարևների «Հայոց պատմության» նախագիծը և հետազոտության կառուցվածքը: Առաջին գլուխը, որը վերնագրված է «Հայագիտության ձևավորման պատմական պայմանները Ռուսաստանում» (XIX դդ. սկզբից մինչև առաջին եռեսունամյակը) ընդգրկում է 30-ից մինչև 85 էջերը: Այստեղ պատմագիտական, արխիվային հարուստ նյութերի հիման վրա վերլուծվում են այդ ժամանակահատվածի հայ-ռուսական հարաբերությունները, հայ ժողովրդի դրությունը 18-րդ դարից վերջից մինչև 19-րդ դարի 30-ական թթ., հայոց ազգային-ազատագրական շարժումը: Փաստերով բացահայտված է տրված Անգլիայի և Ֆրանսիայի գաղութային քաղաքականությունը տարածաշրջանում, հայոց ազգային-ազատագրական շարժման արևմտամետ կողմնորոշումը: Հետաքրքիր պատմական փաստաթղթերի վերլուծությամբ բացահայտվում են Ռուսաստանի արևելյան քաղաքականության մանրամասները (տես էջ 42-ից 52-ը) հայ ժողովրդի ազատագրական պայքարի ռուսական կողմնորոշումը, 18-րդ դարի երկրորդ կեսի Հայաստանի ազատագրության ծրագրերը: Դժվարին աշխատանք է կատարվել աղբյուրների հետ, որտեղ առկա են քննական մոտեցումներ: Հիմնախնդիրը վերլուծվում և վերջնական գնահատականին է արժանանում հետազոտության 7 գլուխներում: Առաջին գլխում հանգամանորեն ներկայացված է նաև Ռուսաստանի հայկական համայնքը և նրա խաղացած դերն ու նշանակությունը հայ ժողովրդի պատմության մեջ, Ռուսաստանի տիրապետության հաստատումը Այսրկովկասում, Ամենայն հայոց կաթողիկոսի շուրջ ծավալված քաղաքական ու դիվանագիտական պայքարը: Նորահայտ փաստերով հեղինակը մեկնաբանել է Հայաստանի ինքնավարության նախագիծը, պատմական առկա փաստերով, ցույց է տվել, որ Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման պատմական նշանակությունը և հայ-ռուսական հարաբերությունները 18-րդ դարի վերջին և 19-րդ դարասկզբին: Գլխի վերջում թեզիսների ձևով ի մի են բերված առաջին գլխի հետազոտության արդյունքները:

Երկրորդ գլուխը վերնագրված է «Հայոց պատմության գիտելիքների զարգացումը Ռուսաստանում (18-րդ դարի վերջին և 19-րդ դարի առաջին եռամյակին)» և ընդգրկում է 85-ից 123 էջերը: Այստեղ Վ. Բելինսկու, Ա. Պուշկինի, Ա. Տուրգենևի, Վ. Մատվենի, Ս. Ուվարովի, Ն. Լուպարտևի և այլոց աշխատությունների և արխիվային համապատաս-

խան փաստաթղթերի և նյութերի հիման վրա հեղինակին հաջողվել է բացահայտել ու ցույց տալ հայրենիքի և այլ ժողովուրդների պատմության նկատմամբ ռուս կովկասագետների և հայագետների հետաքրքրության աճը, հայ-ռուսական հարաբերությունների պատմագրությունը, այսրկովկասի ժողովուրդների նկարագրության լուսաբանմանը նվիրված աշխատությունները, ինչպես նաև Հայաստանի ու հայ ժողովրդի մասին պատմող ճանապարհորդությունների և հետազոտողների օրագրերում, հիշողություններում և գրառումներում ամփոփված տեղեկությունները: Այս գլխում Ս. Սայադովը ներկայացնում է հայերի և Հայաստանի մասին պատմող ռուսական պարբերական մամուլի նյութերը, ինչպես նաև ռուսաց լեզվով թարգմանված հայկական թեմատիկայով ստեղծագործությունները: Հեղինակը առանձին էջերով ներկայացրել է Հայաստանի ու հայ ժողովրդի մասին պատմող հայագիտական հետազոտությունների համար մեծ արժեք ներկայացնող Արտեմ Արարատյանի կենսագրականը, Ղավիթ և Հակոբ Արզանովների «Հայաստանի պատմություն»-ը, Ե. Խուբովայի «Պատմության ժամանակագրությունը», «Ն. Կարամզինը հայ ժողովրդի պատմության մասին» աշխատությունը, ինչպես նաև Հայաստանի մասին տեղեկությունները տեղեկատվական գրականության մեջ և դասագրքերում, Հովսեփ Արղուտինսկի-Ղուզորուկովի կրոնական աշխատությունները և այլն: Հեղինակը հատուկ անդրադարձ է կատարում այնպիսի կարևոր հարցերի, ինչպիսիք են դեկաբրիստները Հայաստանի մասին, Ա. Գրբոյեդովը և Հայաստանը և այլն: Գլխի վերջում տրված են եզրակացությունները, որոնք կատարվել են ռուսական հայագիտության հրատարակությունների քննական վերլուծությունների հիման վրա: Հեղինակին հաջողվել է հարուստ փաստագրական նյութերի հետազոտությամբ ու վերլուծությամբ ներկայացնել ռուսական հայագիտության պարբերացման հիմնահարցերը:

Երրորդ գլուխը նվիրված է հայագիտության ռուսական դպրոցների պատմագրության ձևավորմանը: Այն ընդգրկում է 123-ից 144 էջերը: Այստեղ հեղինակը հանգամանալից քննարկում, վերլուծում և արժևորում է հայագիտության ռուսական դպրոցի այնպիսի նշանավոր ներկայացուցիչների, ինչպիսիք են Ռոբերտ Հրաչիկի Խաչատրյանի, Աբգար Ռուբենի Հովհաննիսյանի, Ծատուր Պավելի Աղայանի, Մկրտիչ Գեղամի Ներսիսյանի, Կամսար Ներսեսի Գրիգորյանի, Սալոմեյա Գրիգորի Արեշյանի, Միքայել Ղավիթի Ամիրխանյանի, Էդուարդ Հայրապետի Հակոբյանի, Վալերի Գևորգի Թունյանի և այլոց աշխատությունները: Այս գլխում ևս տրվում է պատմագրության արդյունքների ամփոփումը:

Չորրորդ գլխում 25 էջի սահմաններում ներկայացվում է Լազարների արևելյան լեզուների ինստիտուտի գործունեությունը հայագիտության զարգացման ուղղությամբ: Հեղինակը միանգամայն ճիշտ կերպով Լազարներին ներկայացնում է իբրև ռուսական քաղաքական ու տնտեսական էլիտայի ներկայացուցիչներ, իբրև հայ ժողովրդի շահերի արտահայտիչները Ռուսաստանում: Միաժամանակ այստեղ վերլուծության է ենթարկվում Լազարների ինստիտուտի հրատարակչական գործունեությունը:

Հաջորդ հինգերորդ գլխում, 168-ից 236 էջերում հեղինակը մեծ մասամբ անդրադառնում և քննական վերլուծության է ենթարկում 19-րդ դարի առաջին կեսի ռուս նշանավոր պատմաբան, գրող և հրապարակախոս Սերգեյ Գլինկայի (1776-1847) պատմագիտական աշխատությունները: Խոսելով Ս. Գլինկայի պատմագիտական ժառանգության, հատկապես նրա Հայաստանի և հայ ժողովրդին նվիրված աշխատությունների մասին, հեղինակը ճշմարիտ կերպով նշում է, որ «Ս. Գլինկայի հետաքրքրությունները Հայաստանի պատմության նկատմամբ պատահական չէր. Այն բացատրվում էր Ռուսական կայսրության կովկասյան քաղաքականության աշխուժացման հետևանքով ռուսական հասարակության մեջ տարածաշրջանի նկատմամբ առաջացած անսքող հետաքրքրությամբ: 1826-28 թթ. ռուս-պարսկական, 1828-29 թթ. ռուս-թուրքական պատերազմները, Արևելյան Հայաստանի միացումը Կայսրությանը էլ ավելի մեծացրեցին այդ հետաքրքրասիրությունը: Հենց այդ շրջանում Ս. Գլինկան Լազարյան ձեմարանի տպարանում մեկը մյուսի հետևից լույս ընծայեց Հայաստանի և հայ ժողովրդի նվիրված երեք գրքեր» (էջ 213,214), որոնցից վերջինը՝ «Հայ ժողովրդի պատմության տեսությունը» (էջ 230,231,235) ընդգրկում է Հայաստանի ամբողջական պատմությունը նախապատմա-

կան ժամանակներից մինչև Հայկական մարզի կազմակերպումը (1828 թ.): Գրքում Ս. Գլինկան, ինչպես նկատում է հեղինակը, «տվել է Հայաստանի աշխարհագրական նկարագիրը, հայոց պատմության ուսումնասիրության վիճակը, սկզբնաղբյուրները, պատմության հիմնական անցքերը» (էջ 235-236): Առաջին և երկրորդ մասերը ուենն ակնհայտ քաղաքագրական բնույթ և կարևորություն են ներկայացնում զուտ պատմա-մշակութային տեսնակյունից (էջ 234, 235): Հեղինակը առավել արժեքավոր է համարում երկրորդ մասի այն հատվածները, որոնք վերաբերում են 18-19-րդ դդ. պատմությունը, մասնավորապես հայ և ռուս ժողովուրդների հարաբերությունների նկարագրությանը: Ըստ հեղինակի «սկզբնաղբյուրային արժեք ունեն Ս. Գլինկայի՝ 19-րդ դ. պատմական անցքերի նկարագրությունները՝ մասնավորապես դարասկզբի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին հայերի մասնակցության վերաբերյալ դրվագները» (տե՛ս էջ 233): Ինչպես ընդգծում է հեղինակը, «Ս. Գլինկայի գործուն մասնակցությամբ է ստեղծվել նաև հայ ժողովրդի պատմության վերաբերող վավերագրերի եռահատոր ժողովածուն» (էջ 234): Ամփոփելով իր միտքը Ս. Սայադովը գրում է. «Դ. և Հ. Արզանյանների և Ս. Գլինկայի աշխատությունները հիմք հանդիսացան հայագիտության, մասնավորապես հայոց պատմության գիտական ուսումնասիրության այն բուռն վերելքի համար, որն արձանագրվեց Ռուսաստանում 19-րդ դ. երկրորդ կեսին» (էջ 235):

6-րդ գլխում (էջ 242-300) հեղինակին հաջողվել է ներկայացնել հայ ժողովրդի պատմության վրա կատարած աշխատանքները: Ցույց է տրված հայոց պատմության համար նյութերի հավաքումը, Խ. Ե. Լազարևի գործունեությունը Անդրիանապոլիսի դեպքերի ժամանակ, «Պատմության տեսությունը» որպես Հայաստանի պատմության, ամբողջական նյութերի նախապատրաստման ուղղությամբ տարվող հետազոտության հիմնական կառուցվածքի ձևավորում ու ընթացք: Այս գլխում բացահայտված է հայ առաքելական եկեղեցու պատմությունն ու նրա տեղը հայ ժողովրդի պատմության մեջ, ցույց է տրված հայոց պատմության աշխատանքի հիմնական փուլերը:

7-րդ գլուխը վերաբերվում է «Ակտերի ժողովածուի» նյութերում հայ ժողովրդի պատմության հարցերի ուսումնասիրությանը և ընդգրկում է 300-ից 396 էջերը: Գլխում ներկայացված են հայոց պատմության նյութերը, հայոց ինքնության պատմա-մշակութային նախադրյալները, հայոց պատմության ժամանակաշրջանի բաժանման հարցերը «ժամանակակից ակտերի» փաստաթղթերում, հին հայկական թագավորությունների պատմության նյութերը, Լորդ Բայրոնը և Հայաստանը, Հայոց պատմական մտքի արմատները, «Հայոց տարեգրությունը իբրև համաշխարհային պատմության ուսումնասիրության կարևորագույն արժեք», հայ գրահրատարակչական նյութերը, հայ-ռուսական հարաբերությունների և հայոց առաքելական եկեղեցու պատմության նյութերը, Լազարյան արևելյան լեզուների ինստիտուտի նյութերը և այլն:

8-րդ գլուխը, որը կրում է «Ս. Գլինկայի հայագիտական աշխատանքի պատմագրությունը» խորագիրը, վերջին գլուխն է, որն ընդգրկում է 396-ից 411 էջերը: Այստեղ մեկ անգամ ևս արժևորվում են պատմաբան Ս. Գլինկայի աշխատությունները հայ ժողովրդի պատմության վերաբերյալ, հայ և ռուս պատմագրության տրված գնահատականները Ս. Գլինկայի՝ հայագիտության համար մեծ կարևորություն ունեցող այդ աշխատանքների համար և այլն:

Վերջաբանում ներկայացված են կատարված աշխատանքի եզրակացությունները, օգտագործված աղբյուրներն ու գրականությունը և այլն: Աշխատանքի քննական վերլուծությունից երևում է, որ այն ունի խոր գիտական բովանդակություն և միանգամայն ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք է: Առաջին անգամ համապատասխան փաստաթղթերի, արխիվային հարուստ նյութերի, հրապարակի վրա եղած օտարալեզու գրականության օգտագործմամբ հեղինակին հաջողվել է նորովի, լայն հետազոտության ենթարկվել թեման: Աշխատանքը գրված է համակարգային մոտեցմամբ, հիմնավորված ներկայացված են հեղինակի մոտեցումներն ու եզրահանգումները, որոնք համոզիչ են ու փաստարկված: Նկատելի է աշխատանքի ներկայացման ձևի և կիրառված մեթոդաբանության ընդհանրությունը, ինչն առավել կուռ և ամբողջական է դարձնում աշխատանքը և գիտական հանրության համար հասկանալի կերպով բացահայտում հեղի-

նակի մտածելակերպը: Այսպիսով հեղինակը դրսևորել է ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք կատարողի լավագույն ունակություններ, սկզբնաղբյուրներից օգտվելու ու փաստական նյութերի մշակման ու տեսական իմաստավորման, ընդհանրացման անվիճելի կարողություններ: Արժևորվելով և բարձր գնահատելով կատարված աշխատանքը՝ կցանկանայինք նշել որոշ նկատառումներ այն բարելավելու համար: Մեր կարծիքով, ցանկալի կլիներ կառուցվածքային փոփոխություններ կատարել աշխատանքի գլուխներում: Դրանք մանրացված են, ինչը որոշ չափով թուլացնում է գիտական մտքի նորույթի ներկայացման կարևորությանը և տվյալ հիմնախնդրի վերլուծության ամբողջական պատկերը: Այսպես օրինակ, մեր կարծիքով, 5-րդ և 8-րդ գլուխները կարելի էր միացնել, քանզի երկուսն էլ նվիրված են Ս. Գլինակայի պատմագիտական ժառանգության ներկայացմանը: Դրանով հնարավոր կլիներ խուսափել նաև կրկնություններից: Որոշ էջերում կան նաև տեխնիկական բնույթի թերություններ, որոշ անհարթ մտքեր ու ձևակերպումներ: Սակայն, մեր կարծիքով, նշված թերությունները չեն նսեմացնում կատարած մեծածավալ գիտական որակյալ և հայագիտության համար օգտակար ուսումնասիրության արժանիքները: Աշխատանքը խորը և բազմակողմանի ուսումնասիրություն է, որը վկայում է հեղինակի կողմից բավականին բարդ հարցերին ինքնուրույն, տրամաբանված գիտական լուծումներ տալու հմտությունների մասին: Հաշվի առնելով կատարված մեծածավալ աշխատանքը՝ նպատակահարմար ենք գտնում աշխատանքը երաշխավորել տպագրության ոչ միայն ռուսերենով, այլ հայերենով ևս:

Էդիկ Մինասյան